

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

17.07.2015թ.

գ. Գետաշեն

Գետաշեն համայնքի ղեկավարի 2015 թվականի 1-ին կիսամյակի կատարած աշխատանքների վերաբերյալ

Գետաշեն համայնքի 2015թ. բյուջեն ըստ եկամտատեսակների կատարվել է հետևյալ կերպ՝

ա/ հողի հարկ 6215.8 հազար դրամի դիմաց 857.0 հազար դրամ կամ 13.8 % ,

բ/ գույքահարկ 2420.4 ազար դրամի դիմաց 1458.6 հազար դրամ կամ 60.3 % ,

գ/ վարձակալական վճարներ 1079.4 հազար դրամի դիմաց 69.7 հազար դրամ կամ 6.5 % ,

դ/ տեղական տուրքեր՝ ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի թույլտվություններ 48.0 հազար դրամի դիմաց 61.7 հազար դրամ կամ 128.5 % ,

ե/ պետության կողմից դոտացիա 16278.6 հազար դրամի դիմաց 16278.6 հազար դրամ կամ 100%

զ/ ՀՀ պետական բյուջեից տրամադրվող այլ ընթացիկ դոտացիաներ 100.0 հազար դրամի դիմաց 100,0 հազար դրամ կամ 100 % :

Ծախսային մասը կատարվել է հետևյալ կերպ՝

ա/ 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում աշխատավարձը և եկամտային հարկը հաշվարկվել և վճարվել է ամբողջությամբ, պարտքեր չեն գոյացել.

բ/ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին և այն ընտանիքներին որտեղ մահ է գրանցվել տրամադրվել է 1450,0 հազար դրամ,

գ/ Խմելու ջրի ցանցի և պոմպերի վերանորոգման համար ծախսվել է 820.0 հազար դրամ, Բնակչությանը մատակարարած խմելու ջրի պոմպերի ծախսած էլ. էներգիայի գումարը՝ 3555,0 հազար դրամ ամբողջությամբ փոխանցվել է համայնքի բյուջեից: Խորքային հորերի պոմպերի համար գնվել է ավտոմատ կառավարման վահանակներ 750,0 հազար դրամ արժողությամբ:

դ/ Վարչական բյուջեի միջոցներից՝ հուշարձանների և մշակութային արժեքների վերանորոգման և պահպանման համար ծախսվել է 980,0 հազար դրամ:

ե/ Մանկական խաղահրապարակի գույքի ձեռք բերման համար 700,0 հազար դրամ:

զ/ 2015 թվականին 1-ին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեից կոմունալ ծառայությունների, մասնավորապես աղբահանության համար հատկացվել է 488,1 հազար դրամ:

2015 թվականին համայնքի բնակիչներից ստացվել է՝ 76 ղիմում քննարկվել են և տրվել են համապատասխան լուծումներ և պատասխաններ: 2015 թվականին համայնքը ստացել է՝ 65 պաշտոնական գրություն, որոնց պատշաճ կերպով և ժամկետներում տրվել են պատասխաններ: Անցկացվել է ավագանու 5 նիստ, կայացվել է 25 որոշում: Արձանագրվել է համայնքի ղեկավարի 8 կարգադրություն, կայացվել է համայնքի ղեկավարի 5 որոշում:

Համայնքի ղեկավարը բնակիչներին տեղեկացրեց, որ շարունակելու է բերքի իրացման հետ կապված բոլոր խնդիրների արագ լուծմանը, սակայն համայնքի հողօգտագործողներին զգուշացրեց, որ կարճ ժամանակահատվածում կատարեն իրենց հարկային պարտավորությունները:

Նա նշեց, որ շարունակելու է բարեկարգել համայնքի տարածքը, հաճախակի կազմակերպելու է սոց. կուլտ. միջոցառումներ և աջակցելու է համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին: Ինչպես նաև ավելացրեց, որ համայնքում առկա հիմնախնդիրները հնարավոր է լուծել միայն սեփական եկամուտների հավաքագրմամբ, որի վրա խիստ ուշադրություն է դարձնելու և լինելու է հետևողական:

Առողջապահության բնագավառում կատարվել են հետևյալ աշխատանքները:

Բուժ անձնակազմի և գյուղապետի անմիջական մասնակցությամբ հսկողություն է սահմանվել խմելու ջրի վթարների, խորքային հորերի քլորացման և կենցաղային աղբի հեռացման հարցերում: Գետաշենի բուժ ամբուլատորիայում գրանցված բնակչության թիվը կազմում է 2626 մարդ, 2015 թվականին բուժամբուլատորիա հաճախումների թիվը կազմում է 2548՝ որից 671-ը երեխաների հաճախումներն են: Գրանցվել է 273 տնային կանչեր, պրոֆիլակտիկ նպատակներով ապաստարկվել է 1020 մարդ, մեկ անգամ համայնք են հրավիրվել բժիշկգինեկոլոգների խումբ՝ ազգաբնակչությանը ստուգելու, համապատասխան անվճար բուժումներ և խորհրդատվություն տալու նպատակով: Բացի այս ամենից Գետաշենի բուժամբուլատորիայում գործում է ընտանեկան բժշկություն, որը մշտապես գտնվում է համայնքի ղեկավարի անմիջական հսկողության ներքո:

Համայնքի ղեկավարը նշեց, որ համայնքում առկա հիմնախնդիրները հնարավոր է լուծել միայն սեփական եկամուտների հավաքագրմամբ, որի վրա խիստ ուշադրություն է դարձնելու և լինելու է հետևողական:

Համայնքում առկա հիմնախնդիրներն են՝

1/ Մանկապարտեզի վերագործարկում:

2/ Խիստ անհրաժեշտ է հիմնովին վերանորոգել խմելու ջրի ներքին ցանցը՝
որը 1965 թ. է շահագործվել և գտնվում է անմխիթար վիճակում:

3/ Սշակույթի տան հիմնանորոգում:

4/ Համայնքի ընդհանուր գազաֆիկացում:

Գետաշեն համայնքի ղեկավար՝



Գագիկ Հովհաննիսյան